ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 113

վարչական տուգանք նշանակելու մասին

14 հունիսի 2017թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Իշխան Կարապետյանս, քննելով «ԴԻԼԻՋԱՆԻ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի տնօրեն Սուսաննա Սարգսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի ապրիլի 18-ի N 136-17 հանձնարարագրի համաձայն՝ 2017 թվականի ապրիլի 20-ից մինչև մայիսի 10-ը ընկած ժամանակահատվածում «ԴԻԼԻՋԱՆԻ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ում իրականացված ստուգման արդյունքում պարզվել և 2017 թվականի մայիսի 22-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ արձանագրվել է այն փաստը, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են **ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 39-րդ, 55-րդ և 60-րդ կետերի** պահանջները. այն է՝

- արտադրական, առևտրի, օժանդակ և կենցաղային սենքերը չեն պահվում մաքուր, նորոգ և պատշաճ վիճակում.
- սննդի կառույցները նախագծված, կառուցված ու տեղակայված չեն այնպես, որ՝ հնարավոր լինի կատարել համապատասխան խնամք, մաքրում և (կամ) ախտահանում, բացառվի կամ նվազագույնի հասցվի օդից փոխանցվող աղտոտումը և ապահովվի համարժեք աշխատանքային պայմաններ՝ գործողությունները հիգիենիկ պայմաններում կատարելու համար: Վարչատնտեսական, կենցաղային և օժանդակ բաժիններն առանձնացված չեն սննդամթերքի պահպանման հատվածից.
- սննդի կառույցն ապահովված չէր կենցաղային տարածքներով՝ սանհանգույց, ձեռքերի լվացման համար նախատեսված, հարմար տեղակայված բավարար քանակությամբ լվացարաններով՝ ապահովված չէր տաք և սառը ջրով, ձեռքերի լվացման ու ախտահանման միջոցներով և չորացման հիգիենիկ սարքերով, անձնակարգմի համար հանդերձարանով, որտեղ հագուստը, սանիտարական հագուստը և կոշիկները պահվեն առանձին.
- նախատեսված չեն համապատասխան տարածքներ՝ անհրաժեշտ հարմարություններով, աշխատանքային գործիքների և պարագաների լվացման, ախտահանման և պահման համար.
- սննդամթերքի պատրաստման, մշակման կամ վերամշակման համար նախատեսված սննդի կառույցներում ապահովված չէր հիգիենիկ պատշաճ գործելակերպի իրականացումը՝ ներառյալ գործընթացների ընթացքում և դրանց միջև ընկած ժամանակահատվածում խաչաձև աղտոտումից պաշտպանումը.
- բոլոր սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկղերը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվել սննդամթերքի հետ կառուցված չեն եղել հիգիենայի պահանջներին բավարարող

նյութերից և չեն պահվել մաքուր, նորոգ և բարվոք վիճակում: Ապահովված չէր անհրաժեշտ գույքով և սառնարանային սարքավորումներով.

- ստուգման ընդգրկող ժամանակահատվածում՝ մինչև փաստացի ստուգման պահը, սննդի շղթայում ներգրավված աշխատակիցները ենթարկված չեն եղել նախնական և պարբերական բժշկական զննության.
- հումքը, բաղադրիչները, կիսապատրաստվածքը և վերջնական արտադրանքը, որոնցում հնարավոր է ախտածին մանրէների բազմացում կամ թունավոր նյութերի առաջացում, չեն պահվել դրանց առաջացումը կամ բազմացումը բացառող ջերմաստիճանում:

Այսպիսով, հաստատվել է, որ սույն վարչական գործով առաջացած իրավախախտման համար պատասխանատու է «ԴԻԼԻՋԱՆԻ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի տնօրեն Սուսաննա Սարգսյանը (հասցե՝ ք. Երևան, Անդրանիկի 121, բն.51): Սուսաննա Սարգսյանը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ կարգով ծանուցվել է և մասնակցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ, 238^2-րդ, 279-րդ, 281-րդ հոդվածներով և 188-րդ հոդվածի 1-ին մասով՝**

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. «ԴԻԼԻՋԱՆԻ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի տնօրեն Սուսաննա Սարգսյանի նկատմամբ նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Տուգանքը վճարել թիվ 900005242822 գանձապետական հաշվին, **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի** համաձայն՝ որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Տուգանքի վճարումն ապացուցող բանկային անդորրագրի պատճենը սեղմ ժամկետում ներկայացնել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի իրավաբանական վարչություն:

3. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է՝ համաձայն **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի**:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով** սահմանված ժամկետում (երկու ամսվա ընթացքում):

ՀՀ ԳՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.

????? ??????????